

մէկ տեսակետով գասաւորել, ուստի սովորութիւն եղած է այլեւայլ կարգերու բաժնել:

Աշխարհագրորէն բուն կովկասի հարաւակողմը կը բնակին հին բերքացոց սերունդներն, որ են Վրացիք կամ Գուրլիք, Կուրի հայիւրը, Մնգրելներն՝ Ռիոնի եւ ինգուրի հովիտներն, Իմուրէթներն՝ Ռիոնի միջին ընթացից վրայ, Գուրիացիք՝ նոյն գետոյ հարաւն. Բագրշվիլիք, Սվանք Չկնիսա՝ ձիալիի եւ Ռիոնի բարձրահովիտները, Խեւառքը, Ղչաւներ, Ցուշերն՝ Եփրայի եւ Ալագանի արաբերականքն. Վըրներն ու Լազերն՝ ճորոխի եւ Վըրի հովիտներն. Սեւ ծովու եզերքը կը բնակէին Չերքեսներն, բայց իրենց 1864ի մեծ գաղթականութենէն ետքը մնացած է հոն միայն գլխաւոր ցեղը՝ Կաբարդացիք, որ կովկասի վրայն հիւսիսային կողմը կը բնակին մինչեւ Կուբան ու Ցերեկ: — Լեւոնաղլմային կեդրոնն՝ Վրաստանի բազմաւնոյն երկու կողմն բունած են Օսերն՝ արիական ծագում ունեցող ազգիկ մը: Լեռանց արեւելեան ձիւղերը բունած են երկու գլխաւոր ցեղեր՝ Չէչէններն ու Ցաղաւանցիք, առաջիններն իրենք զիրենք Նաղլայ կ'անուանեն եւ լեռանց հիւսիսի կողմը կը բնակին մինչեւ Ցերեկ, բայց երկուքի բաժնուած ուսս գաղթականութեամբ մը. Ցաղաւանցիք ալ շատ մը տոհմերու բաժնուած են եւ իրարու լեռուն շին հասկերար, որոնց ամէնէն նշանաւորն են՝ Աւարներն, Բասալիշի եւ Ցէմիր-խան Զուրայի մէջտեղ բնակած, հարաւ բնակողներն ի հնուց ի վեր՝ Լեզգի աշուտմբ ծանօթ են, Ռուսք եւ Հայք, Թաթարք ու Պարսիկք կովկասի ամէն կողմն գաղթականութիւններ ունին:

(Զորահայրի)

4. Յ. 8.



Գ Ր Ա Վ Ա Ն

Թ. ԽՈՐԵՆԱՅԻ ԸՍՑ ԳՐՈՒՅ. Ն. ՄԱՐԻ

(Զորահայրի)

II. Խորենացու պատմութեան ամբողջ առաջին գլքի եւ երկրորդի սկզբի աղբիւրն եղել է մի ինչ որ իմաստուն Ասորու կազմած պատմութիւնը, երբ ապացոյցուեց, որ այդ աղբիւրից բխող տեղեկութիւններն աւանդական են անմիջից են, կարծես սկսեցին յանդիմանել Խորենացուն՝ ստատիստութեան համար եւ ոչ միայն նրա պատմութիւնը մտացածին, այլ եւ նրա աղբիւրնանշայտ Ասորու պատմութիւնը՝ հարուած:

անվաւերական՝ եւ իրեն, Խորենացուն, նրա հեղինակ եւ՝ գեռ աւելի՝ ուղղակի «ստատիստ», համարեցին: Պատմագիր գլխին թախած պայպիսի բացասական խիստ դատապարտութիւնը կարելի է հետեւանք համարել նրա աւանդած պատմական փաստերին տուած չափազանց նշանակութեան հիասթափման՝, որից զերծ չմնացին եւ իրենք քննադատները:

Ճիշդ է, այս նոր քննադատութեան պատասխանում էին հայ փոխականները, մանաւանդ ամէնից շուտ եւ ամէնից աւելի Մխիթարեան ուխտը, որի քննրով առաւելապէս տարածուել է Եւրոպայում Հայերէնի ուսումնասիրութիւնը: Վենետիկի Մխիթարեանների ընդարձակ եւ հակիրճ պատասխանական յօդուածների մէջ Գուտշմիտի բոլոր եզրակացութիւնները հերքուում էին: 2ի կարելի չհետազոտանալ, որ Մխիթարեանների վիճաբանական յօդուածները համեմուած են հարցին վերաբերեալ շատ սրամիտ նկատողութիւններով, եւ լին բազմաթիւ մանր, բայց գնա-

1 Արարութիւնը պահպանում է յիշել այս ուղղութեան այնպատմութիւններից Ս. Մարտէնի Fragments d'une histoire des Arsacides. Paris, 1815, մեծագրութիւնը, որ վերաբերում է Խորենացու Բ. եւ Գ. գլքերին, որովհետեւ այդպէս հասարակ է այն ինքնիքի մեծ մասը, որ որոտթիւսի բաւոյի բերմանը զերմանքի դիտարկմանն ըստ ցարական փորձարկութիւնների հերք ծառայեցին: Գուտշմիտ այդ փաստաթղթի հիման վրա մասը պարզեցնելու համար Եւրոպայի Ստրասբուրգի Մոսէս Կորենայի (Bericht über die Bekanntniss geign. Verhandl. der königl. Fr. Akad. der Wiss. Berlin 1858, էջ 87—103) յօդուածում, որի մի քանի քաղաքականեղ կազմում են նաեւ Հանդուգեալ Պատկանների Խորենացու մասին յայտած կեդրեղների նիւնթական ատաղղը (Bancaria magna et. այլն ՅՄ. Մ. Ռ. 1875 յուն.) ընդհանրապէս Գուտշմիտի բոլոր բացատրող քննադատների մատուցած ծառայութիւնը կապում է նրանում, որ սրանք նորից լուսաբանեցին իրենց նախորդների հետազոտութիւնները ձեռք տրուած պատարաստ ինքնիքը: Մինչեւ անգամ անուններ ուղղելու նման մանր բաներ իրենց ապացոյցներով մոլորեցնում վերջում էին նախորդներին, ուստի, երբ Գուտշմիտ գրում է (op. c. էջ. 29) «Skamados, denn so ist für uns Kamadros (այսինքն Կամադրոս) herzustellen (հետեւինք պատարաստ անունը):» եւ երբ այս կողմերի վրայ հիմնական լքմ. Գ. Ս. Մարտէնի նկատում է (Zur Erklärung der Ägypt. Geogr. des M. von Chorene. Wiener Zeitschr. VII. էջ. 28.) «Die Handschrift von Lambron schreibt hier: Կրե եւս Կամադրոս (էջ 68), — was der verstorbene von Gutschmidt e h a r i a n i g benutzte, um den vollen Namen eines griechischen Schriftstellers (Σκαμανδρος) herzustellen, (այսինքն՝ «Լամբրոնի նկատեցրը գրում է Կամադր, երբ եւս Կամադրոս, որ հանգուցեալ Գուտշմիտը սրտաբանութիւնը գործածել է յայն մասնագիր ամբողջ առանց զանեղ վերալուծումի:» Աւելորդ չի լինի յիշել, որ Գուտշմիտ իսկապէս շատ ճշգրտագին է օգտուել «Պիտրմանի միայն հետեւեալ ատղը (էջ. 40. էջ. 100—101) «Kamadros (ein anderer Cod. hat Kamardos, der Leipziger vielleicht richtiger Skamados für Skamandros). (— այսինքն՝ «Կամադրոս, մի ուրիշ նկատեցրը ունի Մարտէս, Լամբրոնից լքմ երեւս ուղղագիր ընծերը մասին Ս. Մարտէս փել. Սկամադրոս,»:

Բայց եւ այս նոր լուսաբանութեան մէջ իսկապէս նոր, ինքնուրոյն միայն այս էր, որ Գուտշմիտի յօդուածում ծուծ համարեցնած եւ ընդհանրացուած (generalisirt) են այն դիտարկումների կառնիքը, որ թէ ընդհանրացուող բայց հեղինակները յայտն են իրենց դատաւիճել Խորենացուն իրենց մասնագիտութեան վերաբերեալ աւանդանքի մասին:

Հատկի, ձեռագրների վրայ Տիմոնով տեղեկություններով, հետեւանք հայկական գրականությանն այն ընդարձակ ընթերցման, որ հասկանալի եւ մինչեւ անգամ նրանք է միայն Մխիթարեան ուխտի նման ձեռագրների այնպիսի մեծ հաւաքածու եւ հայերէն տպուած գրքերի կեդրոնում։ Բայց մենք ի զուր կը փնտռէինք մեր հարցերի լուծումը այս՝ նիւթի կողմից հետաքրքիր եւ ուսանելի յօդուածներում։ Մի կարծ, բայց եւ բացասող քննադատներին ուղղած արդարացի յանդիմանութիւններից ոչ զերծ յօդուածի տեսակէտը երեւում է հետեւեալ նախագաւառութիւնից։

«Եթէ դատախազն պատմահօր մերջ դատաւորէր զնա միայն իբրեւ զաղբիւր տիեզերական պատմութեան՝ իրաւունք էին նմա, եւ համախոհ էայք արեւոյց ի բաղում ինչ իրս. այլ նա զսահման իրաւանց լայնէ ընդարձակէ՝ փորձ փորձեալ իւրել յատակել զշինուած տոհմային պատմութեանս մերոյ, ուրախալով զգոյուութիւն Մար Աբասայ, (Բաւմիշ, 1878, էջ 33) Մի ուրիշ հեղինակի աւելի ընդարձակ եւ ոչ պակաս նշանաւոր աշխատութեան մէջ գտնում ենք հետեւեալ առաջնորդող միտքը. «Եթէ չենք ուզեր զՄ. Խորենացի ոչ միայն հայր Հայոց պատմութեան այլ եւ ամենայն կարծեցեալ հակասութեանց, վերպակաց եւ խորագրութեան համարել՝ պէտք ենք անոր աղբիւր, այսինքն Մարտիասի կատարիկի առաջնութեան եւ բնագիր ըլլալուն վրայ համոզուիլ, մանաւանդ հետեւեալ երկու պատճառաբանութեամբ, եւն. (Բ. Սարգսեան. Բաւմիշ, 1883, էջ 235)։ Այստեղ խնդիրը կենդրոնանում է Մովսէս Խորենացու պատուի վրայ, միւս երկու ապացոյցները եւ առաջ չեմ բերում, որովհետեւ նրանցից մէկը Նյլն իսկ ինքը, հեղինակը, չի ընդունում իւր գուռչմիտի Encyclopaedia Britannica-ում գրած հակիրճ բայց կեռ քննադատութեան պատասխանում, միւսը այնպիսի ապացոյցներից է, որ յառջանում են հետեւեալ տեսակի դատողութիւններից. «Անհասկանալի է, թէ ինչպէս Հայոց նախնական պատմութեան մէջ — խօսքը մեր նկատողութեան է վերաբերում — երբեմն առաջին եւ երբեմն երրորդ դէմքով է պատմում։ Ո՞վ է գտել արձանագրութիւնը։ Ո՞վ է գրել պատմութիւնը։ Բան չես հասկանում։ Պարզ է, որ այս յիշատակարանում ամէն ինչ խառնուած է, եւ ինքն էլ վերջինն է կազմուած,» Թնուել այն բանի վրայ, ինչ որ մենք չենք հասկանում եւ կամ չգիտենք, թէ եւս բացասական քննադատ-

ներին եւս յատուկ է, բայց մենք դառնանք մեր բանին։ Մինչդեռ թեր եւ դեմ՝ վիճաբանութիւններ էին լինում, վիճաբանութեան յիւթը առանց պարզելու. էին թողել եւ միայն վերջնութեւր տարին առաջին անգամ փորձեցին Մ. Խորենացու առաջին գրքի եւ երկրորդի սկզբից բաժանել այն կտորները, որ Մ. Խորենացին ցոյց է տալիս իբրեւ Ասորու Պատմութիւնից քաղուած։ Հասկանալի է թէ որքան տարածայնութիւններ պէտք է ծագէին եւ դեռ ծագում են, երբ անմիջապէս Խորենացուն պատկանող խօսքեր եւ իմաստներ վերագրում են աւելի հին պատմագրի — Ասորուն, եւ կամ երբ հակառակն է լինում։

Առհասարակ գիտնականներն այնքան վերաբերւոյ հասկացողութիւն ունէին Մար Իբասի ընագրի նշանակութեան մասին, որ երբ լցւ տեսաւ Հայոց Նախնական պատմութիւնը, մեր ինչպիսի ամենանշանաւոր հաստատագիրը, շատ քննել միայն ուշադրութիւն դարձրին։ Վիեննայի Մխիթարեան ուխտի գիտնական Յովսէփ Գալմըռ-ձեան (Սրբազան Խորհրդամատուցից Հայոց, մասն Բ. տես Գ. Ա. խալաթեան. «Զննոր Գլակ, Վիեննա 1893 եր. 1—2,» ծանօթ.) շատացաւ այս մասին թուողիկոչ գովական, բայց եւ ոչ մի փաստի վրայ Տիմոնով հետեւեալ դատողութեամբ թէ «Հայ կարկասանք մին է է. դարուն», եւ միայն Գուռչմիտ առաջինը լուրջ ուշադրութիւն դարձրեց դրա վրայ իւր Խորենացու մասին արած քննադատութեան մէջ. սակայն բնագրին ծանօթ չլինելը, եւ մասամբ, գուցէ, Խորենացու մասին ունեցած բացասական կարծիքը խանգարեցին նրան պարզելու իրերի իսկական դրութիւնը։ Առեւը, որ Գուռչմիտ Հայոց Նախնական պատմութիւնը նման էր գտնում Մարաբասի պատմութեան, որի վրայ Տիմոնով է Խորենացու պատմութեան առաջին մասը, եւ այս երկուսի հեղինակն էլ Մովսէս Խորենացուն էր համարում. սակայն տեսնելով, որ այդ երկու խմբագրութիւններն մէջ միայն այն տարբերութիւնը կայ որ նրանցից մինը համառօտ, իսկ միւսն ընդարձակ է, նա եւթարդում էր, որ Մ. Խորենացի, իբր, կազմել է առաջինը առաջ, իսկ երկրորդը՝ յետոյ, բուն երեք Գրքից բաղկացած Պատմութիւնը խմբագրելու։ Չնայելով սրան, այնու ամենայնիւ Գուռչմիտի կարծիքը այս հարցի մասին յայտնուածներից ամենաչափաւորն է։ Բայց պէտք է նկատել, որ Գուռչմիտ Անանուհի մասին արած իւր աննպաստ գիտողութիւնները հիմնել է աւելի մի յատուկ անուան արամիտ բացա-

տրուութեան, քան թէ բնագրի թարգմանութեան վրայ, որի իւր արած համառօտութիւնը, հազիւ իրեն բաւականութիւն տայ: Իսկ մի անունով ապացուցումը, յիրաւի, շատ սրամիտ է կազմած: Գուաշմիտ քննում է Ագաթանգեղոսի Հայոց քրիստոնէութիւն ընդունելու մասին գիրքը եւ անվաւերական, ոչ թէ Ագաթանգեղոսի Տրդատի քարտուղարի, այլ աւելի ուշ, Ե. դարի կիսում կազմուած մի գործ համարում: Բայց զրանից, հեղինակի անունը նպատակով հնարուած է գտնում, իբր յունարէն «աւետարեբ», նշանակող, որովհետեւ հեղինակը աւետել է Հայաստանի լուսաւորումը քրիստոնէական ուսումով: Եւ քանի որ Անանուք իւր պատմութեան քրիստոնէութեան աւետման հետ բոլորովին կապ չունեցող մասի աղբիւր անուանում է Ագաթանգեղոսին՝ Տրդատի քարտուղարին, հետեւապէս պարզ է, որ Անանուք օգտուել է Ագաթանգեղոսի ժողովրդականացած անունից, որ տարածուել էր Հայաստանի քրիստոնէութիւն ընդունելու անվաւերական աշխատութեան շնորհիւ: Այս բոլորը շատ նման են ճշմարտութեան, բայց միայն անունների զուգագրութեան վրայ հիմնուած այս սրամիտ ենթադրութիւնը չի յարմարւում բնագրերի իսկական իմաստին:

Հայոց Նախնական պատմութիւնը մեզ առանց խորագրի եւ առանց հեղինակի անունն է հասել, Սերէոսի Հերակլէսի Աջաւանքների պատմութեան (Է. դ) ձեռագրերի հետ: Բառում գրասէր, Մ. Խորենացու. «Պետայից գրքի, քննադատը, մի քանի համոզեցուցիչ փաստերով ապացուցանում է, (ZDMG. X 2. 466 եւ I 1.) որ Յովհաննէս կաթողիկոս պատմագրի օրով, այսինքն թ. դարում, Սերէոսի ձեռագրերի մէջ էէր գտնուում Անանուքի Հայոց Նախնական պատմութիւնը: Արդէն վաղուց յայտնի է որ Անանուքի գործը ամենեւին կապ չունի Սերէոսի պատմութեան հետ, սակայն, ինչպէս երեւում է, բնագիրը լաւ չէին կարողանում հասկանալ, ուստի եւ միեւնոյն բնագրի հիման վրայ մի քանիսը Մարարասին, իսկ միւսները Ագաթանգեղոսին էին համարում այդ պատմութեան հեղինակ: Հիւբլմանի անցողաբար յայտնած կարծիքը (Zur Geschichte Armeniens und der ersten Kriege der Araber, եր. 4), որ Գուաշմիտ էլ յիշել է, (եր. 34—35) այսինքն, թէ Հայոց Նախնական պատմութեան անանուն հեղինակը ոչ միայն Սերէոսը չէ, այլ եւ հինգերորդ դարի առաջին երրակի մի պատմագիր, լուրջ արձագանք չգտաւ հայրենի վերաբերող դրականու-

թեան մէջ: Ե. Պատկանեան, որ դեռ 1862 թուին (Թարգմ. եր. 3.) արդարացի կերպով յայտնեց թէ Անանուքի պատմութիւնը «պարունակում է այնպիսի արձանագրութիւններ եւ պատմական անանգութիւններ, որ խորենացին գիտէր, բայց էէր մտրել իւր պատմութեան մէջ», եւ որ շարտեց մի երկունջնքան արգարացի նկատողութիւն վաւեր Սեանագր. եւ այն մէջ, իւր բացասական քննադատութիւնով սաստիկ յափըշտակուած՝ բաց թողեց իւր քննած յիշատակարանի նշանակութեան մասին պնդելու ամենալաւ տրիթը:

Անանուքի պատմութեան ծանօթ սովորաբար Մովսէս խորենացուց յետոյ համարում են յետին ժամանակի (Ժ. Գ. դար) պատմագիր Վարդանին (Ընդհ. պատմ. վ. 5. հրատ. եր. 31. հմտ. Պատկանեան, Սերէոս, բնագիր՝ I թարգմ. 172 եր.): Բայց այս հայրը գեռեւս քննուած չէ: Օրինակ, թողմաւ Արծրունին (Թ. դ.) նոյնպէս ծանօթ է երեւում մեր պատմագրին, նրանից առնելով, ի միջի այլոց, պատերազմից առաջ Հայկի Բէլին ուղղած բնորոշ պատասխանը. (Հրատ. Պատկանեան, եր. 23.) Եւ եթէ ընդունենք Հ. քննադատի հետեւեալ՝ «Խտեղի ուրեք» (՝) յիշատակի, (Բազմ. 1878 էջ 40, 3) վկայութիւնը, այն ժամանակ կը տեսնենք՝ որ մի հատակոտոր (Մասաղի մասին) մինչեւ անգամ բառացի նմանութիւն ունի Ղազար փարպեցիին հետ, որից հետեւում է որ սա եւս օգտուել է Անանուքից:

(Հարանկէս) Թրգմ. Ս. ՆԱՍՏԵՄՍ.



ԵՂԻԹԷԻ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ԱՂԻԻԻՐԸ

(Հարանկէս Եւ Վր.)

Բ.

Ինքնուրոյն ուղարկած գեապանութեան ինքնուրոյն եղելէն եւ Ղազար տարբերութեան են նրանով որ առաջինը միայն մի գեապան է յիշում — Ատոմ գնունի, իսկ երկրորդը՝ երեք գեապան — Վահան Ամատունի, Հմայեակ Մամիկոնեան եւ Մեհրուածն Արծրունի:

Այս տարբերութիւնը նկատել է Պրոֆ. Գր. Խալաթեանը եւ գտաւ է այն անմիաբանութիւնների շարքը «զորոց զպատճառ չէ գիւրին բացատրել», (Ղազար փարպ. եւ Գործք Կորին եր. 82): Յարգելի հեղինակը, ինչպէս շատ տեղ, այս անգամ եւս եղիշէի խօսքը ծա-